# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՉԵՐԿԱՍԻ ՔԱՂԱՔԻ (ՈՒԿՐԱԻՆԱ) ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքը (Հայաստանի Հանրապետություն) և Չերկասի քաղաքը (Ուկրաինա), այսուհետ Կողմեր, առաջնորդվելով փոխադարձ հարգանքի սկզբունքներով, երկու քաղաքների միջև առկա բարեկամական հարաբերություններն ամրապնդելու ցանկությամբ, երկարաժամկետ տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային հարաբերությունների զարգացման և ամրապնդման, երկու քաղաքների բնակիչների միջև փոխըմբռնման հաստատման նպատակով պայմանավորվեցին հետևյալի մասին.

Կողմերը համատեղ նպատակ ունեն նպաստել երկու քաղաքների տարածքային համայնքների միջև փոխըմբռնմանը, բարեկամության ամրապնդմանը և համագործակցության ընդլայնմանը, և հետևյալ ոլորտներում փոխշահավետ համագործակցության և փորձի փոխանակման զարգացման նպատակով աջակցության ցուցաբերմանը.

- տնտեսական զարգացման, գործարար համագործակցության ընդլայնման, մասնավորապես վերամշակող արդյունաբերության, թեթև արդյունաբերության, գյուղատնտեսական և ագրոքիմիական արդյունաբերության, զբոսաշրջության, արտահանման-ներմուծման համագործակցության զարգացման ոլորտում,
- քաղաքապետարանների գործունեության, մասնավորապես քաղաքային տարածքների բարելավման, քաղաքային լուսավորության, քաղաքային տրանսպորտի, հատուկ տրանսպորտային միջոցների, էներգաարդյունավետության և այլընտրանքային էներգիայի աղբյուրների զարգացման վերաբերյալ, այդ թվում բնակելի հատվածում,
- առողջապահության և բժշկական ծառայությունների ոլորտում,
- կրթական և մշակութային ծրագրերի և փոխանակումների իրականացում,
- համատեղ միջազգային ծրագրերի իրականացում, մասնավորապես դրամաշնորհային ֆինանսավորման ներգրավմամբ,
- տեղեկատվության և փորձի փոխանակում այլ ոլորտներում, որոնք նպաստում են իշխանությունների և բարեկամ քաղաքների համայնքների միջև միջազգային հարաբերությունների զարգացմանը։

Էջմիածին քաղաքը և Չերկասի քաղաքը հույս են հայտնում, որ սույն Պայմանագիրը հիմք կհանդիսանա նրանց միջև արդյունավետ և տևական համագործակցության համար։

Սույն Պայմանագիրը ստորագրված է 08 հոկտեմբերի 2021 թվականին, երկու օրինակից, հայերենով և ուկրաիներենով, երկու տեքստերն էլ հավասարազոր են։

Պայմանագիրն անժամկետ է և ուժի մեջ է մտնում պաշտոնական ստորագրումից և համապատասխան մարմինների կողմից հաստատումից հետո։

**Հայաստանի Հանրապետության**
**Էջմիածին քաղաքի կողմից**
**Էջմիածնի քաղաքապետ**
**ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

**Ուկրաինայի**
**Չերկասի քաղաքի կողմից**
**Չերկասիի քաղաքապետ**
**ԱՆԱՏՈԼԻ ԲՈՆԴԱՐԵՆԿՈ**